

ԱՌՑԱՆՑ CALWORKS ՉԼԱՅԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՆ ԱՈՆԶՎՈՂ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԳԱՐՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ (ONLINE CALWORKS APPRAISAL TOOL RIGHTS AND PRIVACY)

Սա Առցանց CalWORKs գնահատման գործիքի (Online CalWORKs Appraisal Tool, OCAT) գործընթացի ամփոփումն է:

Ձեր գործի աշխատողը ձեզ մի շարք հարցեր կտա ձեր ուժերի, հետաքրքրությունների ու կրթության պատմության մասին: Սա կօգնի որոշել ձեր կյանքի այն գործոնները, որոնք կարող են խանգարել ձեզ կենտրոնանալ աշխատանքի կամ աշխատանքին վերաբերվող գործունեության վրա:

Welfare-to-Work-ի նպատակն է տրամադրել ձեզ այն հմտություններն ու օգնությունը, որոնք ձեզ անհրաժեշտ են աշխատանք գտնելու և ինքնաբավ դառնալու համար:

Հարցազրույցը տևելու է մոտ մեկից մինչև մեկ ու կես ժամ: Հարցերը կօգնեն ձեր գործի աշխատողին հասկանալ, թե ձեզ ինչ ծառայություններ ու գործողություններ են հարկավոր այսօրվա դրությամբ:

Ձեզ հարցեր են տրվելու հետևյալ թեմաներով՝

- Ընդհանուր տվյալներ, ներառյալ՝ ով է ապրում ձեզ հետ
- Աշխատանքի պատմություն
- Կրթության պատմություն
- Ձեր ու ձեր ընտանիքի ֆիզիկական, հոգեկան ու հուզական առողջություն
- Փոխադրամիջոցների ու բնակավայրի հետ կապված մտահոգություններ
- Ընտանեկան բռնություն ու անվտանգությանը վերաբերվող մտահոգություններ
- Թմրանյութերի կամ ալկոհոլի օգտագործմանը վերաբերվող մտահոգություններ

Նկատի առեք հարցազրույցի ընթացքում՝

- Որոշ հարցեր կարող են անհարմար թվալ, սակայն նրանք հարկավոր են ավելի լավ հասկանալու համար, թե ինչ օգնություն է ձեզ պետք աշխատանք գտնելու համար:
- Հարցազրույցի ընթացքում քննարկվելիք բոլոր հարցերը գաղտնի են: Սա նշանակում է, որ ձեր գործի աշխատողը գաղտնի է պահելու ձեր զրույցը: Ձեր գործի աշխատողը գաղտնի չի պահելու ձեր զրույցը միայն այն դեպքում, եթե ձեր պատասխանները հուշեն, որ տեղի է ունենում տարեց անձի կամ երեխայի չարաշահում կամ անտեսում: Ձեր գործի աշխատողից պահանջվում է զեկուցել տարեց անձի և երեխայի կասկածելի չարաշահումը՝ հետագա հետաքննության նպատակով:
- Հաշմանդամություն ունեցող մարդիկ իրավունք ունեն ստանալու ցանկացած անհրաժեշտ հատուկ օգնություն: Եթե ձեզ հատուկ օգնություն է հարկավոր այս հարցազրույցի ընթացքում, խնդրում ենք ասել դրա մասին մեր գործի աշխատողին:
- Հարցազրույցը պարունակում է անձնական շատ հարցեր, որոնք հարկավոր են ձեր հաջորդ քայլը պարզելու համար: Դուք չեք տուգանվելու, եթե չեք ցանկանում պատասխանել հարցերին:

Խնդրում ենք տեղեկացնել ձեր գործի աշխատողին, եթե հարցազրույցի ընթացքում դուք հարցեր ունենաք ձեզ տրվող հարցերի մասին կամ OCAT գործընթացի մասին:

ՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ.

Ես կարդացել եմ այս ձևաթուղթը, կամ այն կարդացել եմ ինձ համար:

Ես հասկանում եմ հետևյալը.

- **Ինչու ենք մենք այս հարցազրույցն անցկացնում:**
- **Իմ տրված տվյալները գաղտնի են պահվելու, բացի այն դեպքից, եթե կասկածվում է տարեց անձի կամ երեխայի չարաշահում:**